

ՄԻԳՐԱՑԻԱՆ ԵՎ ՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ ՓՈԽԱԿԵՐՊՈՒՄՆԵՐԸ

ԳԱԼՍՏՅԱՆ Ս. Վ.

Ներկա պայմաններում հասարակության լայն զանգվածներին ամենահուզող թեմաներից մեկը Հայաստանից արտագաղթի հարցն է, որը լայն քննարկման առարկա է դարձել նաև գիտական, հասարակական-քաղաքական, զանգվածային լրատվության շրջանում: Հատկապես մամուլը, համացանցը, հեռուստահաղորդումները վերջին շրջանում ողողված են հանրապետությունից արտագաղթի ահազնացող չափերի մասին բազմաթիվ նյութերով, որտեղ հիմնականում մտահոգություն է հնչում Հայաստանի «դատարկվելու» և դրա կարգավորման հարցում պետական քաղաքականության բացակայության մասին: Փաստ է, որ վերջին քսան տարիներին հանրապետությունից արտագաղթել է շուրջ մեկ միլիոնից ավելի մարդ, ընդ որում զանգվածային արտահոսքի ժամանակաշրջան է համարվում 1992-1994 թթ.՝ 610-620 հազ. մարդ կամ երկրի բնակչության թվի գրեթե 1/5-ը¹, իսկ 1995-2001 թթ. դիտարկվել է արտաքին միգրացիայի ակտիվության նվազեցում՝ մոտ 250 հազ. մարդ կամ երկրի բնակչության թվի մոտ 8%-ը²: Ըստ Ազգային վիճակագրական ծառայության տվյալների՝ 2002-2010 թթ. հանրապետությունից արտաքին միգրացիայի բացասական մնացորդը կազմել է 57.5 հազար, որից 46.7 հազ. մարդը բաժին է հասնում ԱՊՀ երկրներին, իսկ 10.8 հազ. մարդը՝ այլ, այդ թվում՝ Եվրամիության երկրներին³: Մինչդեռ վերջին երկու տարիների ընթացքում այդ ցուցանիշը մոտ մեկուկես անգամ ավելացել է՝ բացասական մնացորդը՝ 86.6 հազ. մարդ⁴: Վիճակագրական տվյալներից կարող ենք եզրակացնել, որ միգրացիան հանրապետության համար, անշուշտ, ունենում է լուրջ տնտեսական և ժողովրդագրական բացասական հետևանքներ: Հանրապետության տնտեսության և ժողովրդագրական իրավիճակի վրա դրա հետևանքների խնդիրների ուսումնասիրությունը տարածաշրջանային անվտանգության և երկրի հետագա զարգացման տեսակետից շատ կարևոր է: Ելնելով դրանից՝ Հայաստանում այդ հիմնախնդիրներով զբաղվող մասնագետների մի մասը միգրացիան գուտ արժևորում է որպես տնտեսական, ժողովրդագրական և սոցիալական երևույթ՝ մի կողմ թողնելով դրա ունեցած էթնոմշակութային տեսանկյունները: Այդպիսի մոտեցումներ են դիտարկվում նաև արևմտյան

¹ Միգրացիա և մարդկային զարգացում. Հնարավորություններ և մարտահրավերներ, Մարդկային զարգացման ազգային զեկույց, Հայաստան 2009, էջ 39:

² Նույն տեղում, էջ 35:

³ Հայաստանի ժողովրդագրական ժողովածու, Ե., 2011, էջ 118:

⁴ Միջազգային սահմանահատումների ծավալները 2000-2012 թթ., ՀՀ տարածքային կառավարման նախարարության միգրացիոն պետական ծառայություն, www.smsta.am

գիտնականների որոշակի շրջանակներում: Օրինակ՝ Ե. Ռավենշտեյնը միգրացիոն գործընթացների համար առանձնացրել է 11 սկզբունք, իսկ դրա ուսումնասիրության հիմնական գիտական մոտեցումները դասակարգել է երեք խմբի՝ միգրացիան բացատրելով շուկայական հարաբերությունների, ոցիոլոգիական, ժողովրդագրական և այլ տեսանկյուններից: Այս հեղինակը միգրացիան ուսումնասիրում է՝ հիմնվելով հետևյալ տեսությունների վրա.

- ընդհանուր ազգաբնակչության տեսություն (ըստ Ա. Սովիի)՝ միգրացիան բնորոշվում է որպես ժողովրդագրական գործընթաց, որը վերարտադրողական վարքագծի միջոցով անմիջականորեն ներազդում է բնակչության վերարտադրության, նրա սեռատարիքային կազմի վրա.

- ժողովրդագրական անցման տեսություն (ըստ Զալինսկու)՝ մասնակիորեն ընդգրկում է նաև միգրացիան, որը, ի թիվս ժողովրդագրական այլ գործընթացների, նույնպես հետևողականորեն փոխվում է միջարդյունաբերականից հետարդյունաբերական հասարակության անցման ժամանակ.

- ժողովրդագրական անցման երկրորդ տեսություն (ըստ Վան դե Կայի): Ըստ սրա՝ միգրացիան դիտարկվում է որպես Արևմտյան Եվրոպայի բնակչության քանակի և կառուցվածքի փոփոխման կարևոր գործընթաց⁵:

Մինչդեռ միգրացիան ավելի բարդ երևույթ է, որը ներառում է սոցիալ-հոգեբանական և մշակութային մի շարք խնդիրներ, և դրանք ևս կարիք ունեն առանձին ուսումնասիրության: Միգրանտները, երկար տարիներ ապրելով և աշխատելով այլեթնիկ միջավայրում, ինտենսիվ շփվելով տեղի բնակչության հետ, կրում են մշակութային որոշակի ազդեցություն: Այդ առումով կարևոր խնդիր է բացահայտել, թե անհատական և խմբային մակարդակով միգրացիան ինչ ազդեցություն է թողնում նրանց մշակույթի, լեզվի, ինքնագիտակցության, և այդ ոլորտում ինչ համամասնության մեջ են բուն էթնիկ ու փոխառված մշակութային տարրերը: Մյուս կողմից միգրանտները արտահանում են իրենց մշակութային արժեքները: Այսինքն՝ միգրանտը միայն լոկ տեղաշարժվող չէ: Միգրացիայի հետևանքով նա իր հետ ոչ միայն տանում, այլև բերում է որոշակի մշակութային տարրեր: Կարևորվում է նաև այլեթնիկ միջավայրին միգրանտների ինտեգրման խնդիրը. մասնավորապես նրանց մեջ ինչ էթնոդիֆերենցնող (մենք-նրանք) և էթնոինտեգրացնող գործընթացներ են տեղի ունենում⁶: Միգրացիայի հետևանքով մշակույթի տարածման և այլեթնիկ միջավայրում նրանց ինտեգրման խնդիրների վերաբերյալ ձևավորվել են տարբեր մոտեցումներ: Այդ խնդրին անդրադաձել է դիֆուզիոնիզմի տեսությունը, որը ձևավորվել է դեռևս XIX դ. վերջին: Մշակութային տեսանկյունից այն նշանակում է մշակութային տարրերի

⁵ Законы миграции Е. Равенштейна. <http://rudocs.exdat.com/docs/index-326540.-.html?page=107>. 07.07.2013

⁶ Арутюнов С. А. Народы и культуры. Развитие и взаимодействие, М., 1989, с. 166.

տարածում մի վայրից մյուսը: Առաջանալով մի հասարակության ներսում՝ այս կամ այն մշակութային երևույթը կարող է վերցվել շատ այլ հասարակությունների կողմից: Անդրադառնալով մշակույթի հորիզոնական տարածման խնդրին՝ Ռ. Նեսբիտը զբոսաշրջության և զանգվածային հաղորդակցման միջոցների հետ կարևոր մեխանիզմ է համարում նաև միգրացիան: Միգրացիայի ժամանակ մի վայրից մեկ այլ վայր տեղափոխված մարդկանց խումբը կամ ընդունում է տվյալ տարածքի մշակութային առանձնահատկությունները, կամ էլ կիսով չափ է ընդունում՝ ստեղծելով իր ենթամշակույթը: Միգրացիայի հետևանքով այդ տարածքում ապրողները կրում են նաև միգրանտների մշակութային ազդեցությունը⁷: Գերմանացի հետազոտող Ֆ. Ռատցելը, ուսումնասիրելով նյութական մշակույթի աշխարհագրական տարածումը, նշում է մշակութային տարրերի տարածման երկու միջոց՝

1) ողջ մշակութային տարրերի համալիր տեղափոխում, որը անվանում են ակուլտուրալիզացիա.

2) առանձին ազգագրական տարրերի տեղափոխություն մի ազգից մյուսը⁸:

Անդրադառնանք նաև անդրազգայնության մոտեցմանը: Այդ եզրույթը սոցիալական ուսումնասիրությունների հետևանքով շրջանառության մեջ է մտել անցյալ դարի 70-ական թթ.: Դրա ի հայտ գալը ամենից առաջ կապված է տնտեսական ոլորտի ձևափոխումների հետ, որտեղ սկսեցին գերիշխել խոշոր միջազգային ընկերությունները՝ անդրազգային կորպորացիաները և բանկերը: Այսպես, Սասկյա Սասենը, ուսումնասիրելով խոշոր քաղաքները, որոնք համարվում են ինստիտուտների (օրինակ՝ բանկեր և իրավաբանական ֆիրմաներ) և մարդկանց (օրինակ՝ միջազգային փորձագետներ) միջազգային ցանցեր և ուշադրություն դարձնելով «անդրազգայնություն» եզրույթին՝ առաջին հերթին ցանկանում էր շեշտադրել գլոբալիզացիայի պայմաններում տնտեսական, քաղաքական և սոցիալական գործընթացների մասշտաբային փոփոխությունները: Հետագայում «անդրազգայնություն» եզրույթը ներառվում է միգրացիայի ուսումնասիրության ոլորտ⁹: Դասական միգրացիոն հետազոտություններում սովորաբար համայնքը դիտարկվում է միայն սերտորեն կապված «տարածքի» հետ: «Տարածքի» հետ կապը բնորոշվում է առանձնահատուկ տեղային մշակույթի գոյությամբ: Այսպիսով, ընդունող հասարակության մի մասը դառնալու համար միգրանտները պետք է հարմարվեն կամ ձուլվեն տեղական մշակույթին: 1990-ական թթ. սկզբին Նինա Գլիկ Շիլլերը և այլ հետազոտողներ կասկածի տակ դրեցին այդ թեզը և առաջարկեցին «անդրմիգրանտներ» և «անդրազգայնություն» հասկացությունները՝ որպես միգրացիայի միջազգային հետազոտություններում նոր հարացույցի հիմք: Այդ հարացույցի

⁷ Шостак С. Механизмы культурной диффузии. http://www.isoc.com.ua/journal/07_Shostak.pdf, 11.06.12

⁸ <http://nacmop.narod.ru/pxru/culture/belic.htm>, 08.07.13.

⁹ Sassen S. The Global City, London, 1991, p. 213-227.

շրջանակում անդրազգայնությունը բնորոշվում է «որպես սոցիալական գործընթաց, որտեղ միգրանտները ստեղծում են սոցիալական դաշտ՝ անցնելով աշխարհագրական, մշակութային, քաղաքական սահմանները»¹⁰: Միգրանտները այն դեպքում են դառնում անդրմիգրանտներ, երբ «զարգացնում և պահպանում են ընտանեկան, տնտեսական, սոցիալական, կազմակերպական, կրոնական, և քաղաքական հարաբերությունները՝ անցնելով բոլոր տեսակի սահմանները»: Անդրմիգրանտները միաժամանակ ապրում են մի քանի տարածքում և ներառվում են մի քանի հասարակություններում, ստեղծում են նոր փոխկապակցվածություն և հաստատվում համայնքում, բայց առանձնահատուկ կապված են իրենց ազգային պետության և տարածքի հետ: Անդրմիգրանտների թվին կարելի է դասել տնտեսական միգրանտներին, որոնք ընտրում են մի տեղից մյուսը տեղափոխվելու ռազմավարությունը: Նոր միջավայրում նրանք ձևավորում են նոր սոցիալական կապեր, բայց միաժամանակ շարունակում են գործել իրենց նախկին հասարակության սոցիալական ցանցերում¹¹: Գերմանացի հետազոտող Լ. Պրիսը առաջարկել է «անդրազգային սոցիալական տարածություն» կատեգորիան: Ըստ նրա՝ պայմանավորված գլոբալիզացիայի գործընթացներով՝ մարդկանց, ապրանքների և տեղեկատվության բարդ և անխզելի հոսքերի հետևանքով նշանավորվում է միգրացիայի նոր դարաշրջանը: Միգրանտների սոցիալական ցանցերը արդեն ինտեգրացնում են ապատեղայնացված և ցրված տարածությունները՝ անցնելով պետական սահմաններ, մասնատում են մարդկանց ազգային ինքնությունը, համակարգում են նրանց կենսաձևը և կարիերան: Սյդայիսի անդրազգային սոցիալական տարածությունների գոյությունը ոչնչացնում է միգրացիայի ավանդական ձևերը: Մասնավորապես, «միգրանտների երկրնորանքը»՝ նոր էթնիկ փոքրամասնությունների ինտեգրացիան, օրակարգից հանվում է: Ինչպես ցույց են տալիս հետազոտությունները՝ միգրանտները ամբողջովին չեն կողմնորոշվում ինտեգրացիայի վրա, իսկ էթնիկ փոքրամասնությունը ձևավորվում է տեղական էլիտայի, այլ ոչ թե շարքային վերաբնակիչների կողմից: Անդրմիգրանտները, փաստացիորեն միաժամանակ ապրելով ուղարկող և ընդունող հասարակություններում, ստեղծում են անդրազգային սոցիալական տարածություն¹²: Անդրտեղայնության հայեցակարգը ամենից առաջ կապված է Արջուտ Ապադուրայի անվան հետ: Նա այն բնորոշում է՝ ելնելով տեղայնության իր սեփական ընկալումից՝ հակադրելով հա-

¹⁰ Glick S. N., Bash L., Blanc-Szanton C. (eds.). Towards a Transnational Perspective on Migration. Race, Class, Ethnicity and Nationalism Reconsidered, N. Y. (Annals of the New York Academy of Sciences, 1992, Vol. 645).

¹¹ Кайзер М., Бредникова Ол. Транснационализм и транслокальность. http://www.sfb600-online.uni-trier.de/projekte/sfb-bibliographie/teilprojekt-a08/publikationen-a8/pdfs/KaiserBrednikova_2004_Migration. 10.08.2013.

¹² Pries L. Transnationale Soziale Raume. Theoretisch-empirische Skizze am Beispiel Mexiko-USA (Zeitschrift für Soziologie, 1996, 25 (6). Dec. S. 456-472).

րևանություն կատեգորիային¹³: Այսպիսով, միգրանտները, որպես մի քանի հասարակությունում գտնվողներ, դառնում են անդրմիգրանտներ՝ ստեղծելով անդրազգային, անդրտեղային, անդրմշակութային մի նոր տարածք:

Անդրադառնանք հայ միգրանտների մշակութային փոխակերպումների խնդիրներին, որի վերլուծության մեթոդաբանական հիմքը աշխատանքային և Հայաստան վերադարձած միգրանտների շրջանում իրականացրած էթնոսոցիոլոգիական հարցումների և խորացված հարցազրույցների արդյունքներն են¹⁴:

Այլէթնիկ միջավայրում միգրանտների ինտեգրացիայի և մշակութային փոխակերպումների խնդիրը պայմանավորված է միգրացիայի բնույթով (աշխատանքային, կրթական նպատակներով, մշտական բնակության մեկնածներ), այնտեղ բնակվելու տևողությամբ, տարիքային և կրթական առանձնահատկություններով, լեզվի իմացությամբ, տեղի բնակչության հետ շփումների ինտենսիվությամբ, սոցիալական ցանցերում ընդգրկվածության աստիճանով, հայրենիքի հետ կապերով, խառնամուսնություններով: Հետազոտության արդյունքներից պարզվեց, որ աշխատանքային միգրանտների մի մասի աշխատանքը կրում է սեզոնային բնույթ, ընդունող հասարակություններում շփումները սահմանափակ են, որի հետևանքով մշակութային տարրերի փոխանակումները երբեմն ունենում են նեղ շրջանակներ: Մինչդեռ այդ հարցում պատկերը այլ է կրթական նպատակներով և մշտական բնակության մեկնածների շրջանում: Հատկապես երիտասարդ տարիքում տեղափոխված միգրանտներն ինտեգրվում են այդ հասարակությանը: Օրինակ՝ Օմսկի հայ միգրանտների 32.3%-ը այնտեղ հաստատվել է մինչև 19տ., 46.1%-ը՝ 20-29տ., 21.6%-ը՝ 30 և բարձր տարիքում: Բացի դրանից, Օմսկի միգրանտների առաջին սերունդը նորեկներին օգնում էր մշակելու այլ էթնիկ միջավայրին բնորոշ ապրելաձև և վարքի մոդելներ՝ նոր միջավայրին հարմարվելու համար: Այլէթնիկ միջավայրին նրանց ադապտացիայի վրա ազդում է նաև այնտեղ ապրելու ժամանակահատվածը, որի ընթացքում ստեղծվում են նոր միկրոմիջավայր, կապեր ու տեղի բնակչության հետ շփումներ: Հարցումներից պարզվեց, որ նրանց 27.6%-ը այնտեղ արդեն ապրում է 1-5 տարի, 46.2%-ը՝ 6-9 տ., 12.4%-ը՝ 10-19 տ., 8.7%-ը՝ 20 տ. և ավելի: Հարցվածների միայն 3.8%-ը ծնվել և մեծացել է այդ քաղաքում, իսկ 1.3%-ը մշտապես, բայց ընդհատումներով ապրում էր այդ բնակավայրում: Նրանց 69%-ը այնտեղ ապրում էր ընտանիքներով, իսկ 31%-ը՝ առանց ընտանիքների: Նրանց 36.3%-ն ուներ բարձրագույն,

¹³ Appadurai A. The Production of Locality, London, 1995, p. 204-225.

¹⁴ Քանակական հարցումները ըստ փուլերի իրականացվել է 2001-2012 թթ. Հայաստանի 8 մարզի շուրջ 980 աշխատանքային միգրանտների տնային տնտեսությունների, ինչպես նաև 1990-ական թվականներից աշխատանքային միգրացիայի հետևանքով Օմսկի և Նովոսիբիրսկի մարզերում մշտական բնակություն հաստատած հայկական համայնքի 120 անդամների հետ: Նրանց և միգրացիայի խնդիրներով զբաղվող մասնագետների շրջանում իրականացվել են նաև շուրջ 100-ից ավելի խորացված հարցազրույցներ:

27.5%-ը՝ միջն. մասնագիտական, 27.5%-ը՝ միջնակարգ կրթություն, իսկ 7.5%-ը նախկին պրոֆտեխտուսումնարանների շրջանավարտներ են: Բարձր կրթական մակարդակը այլեթնիկ միջավայրում համարվում է կարեվոր ներուժ հետագա սոցիալական ակտիվության համար: Միգրացիայի մշակութային դրսևորումներից միայն լեզվական փոփոխություններն են, որ նպաստում են նրանց ադապտացիային և ազդում ազգամիջյան շփումների ինտենսիվության և նոր արժեքային համակարգի ձևավորման վրա: Հետազոտության արդյունքներով, միգրանտների շուրջ 90%-ը իր մայրենի լեզուն համարել է հայերենը: Բայց այդ հանգամանքը չի խանգարում մյուս լեզուների, մասնավորապես ռուսաց լեզվի ազատ տիրապետմանը, որի վերաբերյալ կոդմ են արտահայտվել հարցվածների գերակշիռ մեծամասնությունը: Ապրելով այլ երկրներում՝ միգրանտների գերակշռող մասը ստեղծում է անդրմշակութային մի նոր տարածություն՝ միաժամանակ կրելով իրենց ազգային և ընդունող հասարակության մշակույթի արժեքները: Դրա դրսևորումներից է նրանց ազգային պատկանելության խնդիրը. այլ երկրներում երկար տարիներ բնակություն հաստատվածների գերակշռող մեծամասնությունը շարունակում է իրեն համարել հայ և նրա մշակութային արժեքների կրող: Միայն ազգամիջյան խառնամուսնական ընտանիքների մի մասում է, որ նրանք իրենց երեխաներին համարում են ռուս կամ այլազգի: Նման ընտանիքներում ծնված երեխան բնութագրվում է երկէթնիկ ինքնությամբ, քանի որ նրանք դաստիարակվում և մեծանում են ծնողների մշակությամբ ընդունված նորմերով և սովորույթներով: Սակայն ազգային պատկանելությունը չի խանգարում, որ նաև օտար միջավայրում նրանց շուրջ կեսը այլազգի մտերիմ ընկեր ունենա: Այլ ազգերից ընկերների ձեռքբերումը և նրանց հետ շփումները համարվում են էթնոմշակութային տեղեկատվության փոխանցման կարևոր աղբյուր: Այդ շփումների ընթացքում նրանք ոչ միայն անմիջականորեն առնչվում են օտար մշակույթի բաղադրատարրերին, այլև տեղի է ունենում արժեքների, պատկերացումների, գաղափարների ներթափանցում¹⁵: Օտար միջավայրում չինտեգրվելու փաստ է նաև այն հանգամանքը, որ ապրելով այլ հասարակություններում՝ նրանց գերակշիռ մեծամասնությունը իր հայրենիքը շարունակում է համարել Հայաստանը՝ ունենալով հաճախ այլ երկրի քաղաքացիություն: Պայմանավորված այս հանգամանքով՝ նրանց մեծ մասը հայրենիքում չի վաճառել սեփական բնակարանը, իսկ մի մասն էլ հույս ունի, որ Հայաստանում տնտեսական վիճակի բարելավումից հետո վերադառնալու է հայրենիք: Նրանք ինտենսիվորեն պահպանում են իրենց կապերը հայրենիքի հետ: Ապրելով ընդունող հասարակությունում՝ նրանք այնտեղ միաժամանակ ստեղծում են նաև ազգային-մշակութային, կրթական, բարեգործական կազմակերպություններ և միավորվում են այդ կառույցներում, հաճախում են տեղի հայկական եկեղեցի, բացում են կիրականօրյա դրպրոցներ,

¹⁵ Գալստյան Մ., Արտագնացությունը Հայաստանում (XIX դարի երկրորդ կես-XX դարի 80-ական թթ.), Ե., 2009, էջ 57:

հրատարակում են թերթեր և դրանց միջոցով պահպանում և զարգացնում են իրենց ազգային-մշակութային արժեքները: Նրանք այնտեղ ամեն տարի նշում են ազգային և եկեղեցական տոներ, ինչպես նաև հիշատակի օրեր. ապրիլի 24, Սուրբ Մարգիս, Տեառնընդառաջ, Վարդավառ, Համբարձման օր, որոնց ակտիվորեն մասնակցում է նաև երիտասարդությունը: Այդ տոնակատարություններին, հատկապես Վարդավառին, մասնակցում է նաև տեղի բնակչությունը: Օրինակ՝ միգրացիայի հետևանքով Ռուսաստանի Դաշնությունում, Ուկրաինայում և այլ երկրներում հաստատված տավուշցիները նույն օրը մեծ շուքով նշում են Վարդավառը, և այդ առթիվ ընտանիքներով, հարազատներով կազմակերպում են խնջույք: Այն ուղեկցվում է մատաղի հանդիսություններով և ծիսական ուտեստներով, որին երբեմն մասնակցում են նաև տեղացի ընկերները, ծանոթները: Այդ կապակցությամբ հարցազրույցի մասնակիցները բերել են բազմաթիվ օրինակներ. «Ես մի քանի տարի ընտանիքով և բարեկամներիս հետ ապրել եմ մերձմոսկովյան քաղաքներից մեկում: Ամեն տարի նույն օրը մենք այնտեղ անպայման հավաքվել և քաղաքից դուրս՝ բնության գրկում, Վարդավառը նշել ենք, որին մասնակցել են նաև տեղացի մեր հարևանը և ամուսնուս աշխատանքային ընկերները: Այդ օրը մենք թխել ենք Վարդավառի թխվածքը՝ քաղցր խորիզով նազուկ, և գառ ենք մատաղ արել»¹⁶: Նրանք կարևորում են մկրտության, կնունքի, պսակադրության, հարսանեկան ծեսերի կատարումը, որը, ըստ նրանց, օտար միջավայրում համարվում է էթնիկ ինքնության պահպանման և «հայ մնալու» կարևոր գործոն: Իջևան քաղաքի Ներսես Շնորհալի եկեղեցու քահանան բերեց բազմաթիվ օրինակներ, թե ինչպես դրսում ապրող տավուշցիները վերադարձել և իրենց երեխաների պսակադրությունը կատարել են իրենց եկեղեցում. «Տղաս, որ արդեն երկար տարիներ ապրում է Կերչում, իսկ երեք երեխաները ծնվել են այնտեղ, հինգ տարի առաջ ընտանիքով եկավ և Իջևանի եկեղեցում երեխաներին կնքեց, հետո վերադարձավ: Հիմա խիղճս շատ հանգիստ է, գիտեմ, որ թոռներս արդեն կնքված են և հայ են»¹⁷: Հետազոտությունից պարզվեց, որ վերադարձածների մեծ մասը, օտար միջավայրը համարելով հայի ինքնությանը սպառնացող վտանգ, չի ցանկանում, որ երեխաները մեծանան այդ միջավայրում և կրեն օտար բարքերի ազդեցությունը: Այդ մտահոգությունը մեծ է՝ հատկապես հասունացած աղջիկների նկատմամբ: Վերադարձած միգրանտներից մեկը այդ կապակցությամբ պատմեց. «Ես մոտ 15 տարի ապրել եմ Ռուսաստանում, այնտեղ ունեի աշխատանք, քաղաքացիություն, բայց չէի ուզում, որ երեխաներս մեծանան այդ միջավայրում: Այնտեղի երիտասարդները, աչքերը չբացած, ամեն ինչով զբաղվում են, իսկ այդ բարքերը ինձ համար խորթ են: Իմ երեխաները այնտեղ կկորչեն»¹⁸: Հայ միգրանտների՝ օտար

¹⁶ Գալստյան Մ., Դաշտային ազգագրական նյութեր (այսուհետև՝ ԴԱՆ), Իջևան, 2008:

¹⁷ Նույն տեղում:

¹⁸ Նույն տեղում:

միջավայրին չձուլվելու հանգամանք է նաև մենեթնիկ ամուսնությունների բարձր տոկոսը:

Ապրելով այլեթնիկ միջավայրում՝ նրանք ձևավորում են նոր սոցիալական կապեր, բայց դրա հետ միաժամանակ շարունակում են գործել իրենց նախկին հասարակության սոցիալական ցանցերում: Հայկական էթնիկ ցանցերը երբեմն ձևավորվում են հայրենակիցների, ազգակիցների, բարեկամների, հարևանների շրջանակում¹⁹. դրանք միատարր չեն, բաղկացած են ներէթնիկ խմբերից (մարտունեցիներ, լոռեցիներ, շիրակցիներ, տավուշցիներ և այլն): Այդ ցանցերը զբաղվում են ոչ միայն հայ միգրանտների աշխատանքի տեղավորման խնդիրներով, այլև դրանց միջոցով նորեկները հարմարվում են այլեթնիկ միջավայրին: Այդ ցանցերը կանխորոշեցին նաև Հայաստանում գտնվող նրանց ընտանիքների, հարազատների արտագաղթի ուղղվածությունը, իսկ օտար միջավայրում իրենցին էթնոլոկալ տարածությունների ձևավորմանը: ՌԴ-ում առանձնանում են բնակավայրեր, որտեղ համախումբ ապրում են ազգակից ընտանիքներ՝ ստեղծելով իրենց «էթնիկ անկլավները»: Օրինակ՝ ՌԴ-ի Նովոգորոդի, Նովոսիբիրսկի, Չելյաբինսկի, Սարատովի, Վոլգոգրադի մարզերի առանձին բնակավայրերում համախումբ ձևով ապրում է Գեղարքունիքի մարզի Սարուխան համայնքի շուրջ 300 ընտանիք: Շիրակի մարզի Ազատան գյուղից մշտական բնակության են տեղափոխվել ՌԴ-ի Հեռավոր Արևելք՝ Յակուտիա, Փանիկ գյուղից՝ Իրկուտսկի և Չիտայի, Վայոց ձորի Արենի գյուղից՝ Կրասնոյարսկի մարզերի առանձին բնակավայրեր²⁰:

Հետազոտության արդյունքներով երկար տարիներ այլ հասարակություններում ապրած և այնուհետև Հայաստան վերադարձած միգրանտների շրջանում դիտարկվում է աշխարհայացքի, արժեհամակարգի, վարքագծային մոդելների փոփոխություն: Դրանք հետազայում դառնում են սեփական հասարակության արժեհամակարգի փոփոխության վրա ազդող կարևոր գործոն: Յուրացնելով այլեթնիկ միջավայրի հոգևոր մշակույթի մի շարք տարրեր՝ որոշակի փոխակերպումներ է դիտարկվում նաև նրանց պահվածքում և վարվելակերպում: Հատկապես արժեքային փոխակերպումները սեփական հասարակություն ներմուծողներ են երիտասարդները, որոնք կրթություն են ստացել դրսում: Նրանց մեջ ձևավորվում է քաղաքացիական գիտակցություն և վերադառնալուց հետո ակտիվորեն մասնակցում են Հայաստանի քաղաքացիական և բնապահպանական շարժումներին: Այլեթնիկ միջավայրում միջանձային շփումները կարևոր պայման են նաև ազգային կարծրատիպերի փոփոխության համար. նրանց շրջանում բարձր է քննադատական վերաբերմունքը ոչ միայն օտար, այլև սեփական միջավայրի նկատմամբ, և էթնիկ ինքնագնահատման փաստը դառնում է առավել հավաստի ու բովանդակալի: Էթնիկ այն կարծրատիպերը,

¹⁹ Фирцов Е., Кривышина В. К изучению коммуникационной среды российской армянской диаспоры (по материалам полевых исследований локальных групп Владимирской области) (Диаспоры, т. 1, М., 2004, с. 10).

²⁰ Գալստյան Մ., ԴԱՆ, Գեղարքունիքի, Շիրակի, Վայոց ձորի մարզեր, 2008:

որոնք կապված են ավանդական մշակութային ցանցային բնութագրերի հետ, միջանձնային շփումների ժամանակ ենթարկվում են որոշակի փոփոխությունների:

Այսպիսով, 1990-ական թթ. դրսևում ապրող միգրանտները կրում են այդ երկրների մշակութային ազդեցությունը, բայց ամբողջապես չեն ձուլվում այդ հասարակությանը: Միաժամանակ օտար միջավայրում նրանք շարունակում են պահպանել և զարգացնել իրենց ազգային մշակույթը, ինչը կարելի է համարել անդրմշակութային նոր սոցիալական տարածության ձևավորման դրսևորում:

МИГРАЦИЯ И КУЛЬТУРНЫЕ ТРАНСФОРМАЦИИ

ГАЛСТЯН М. В.

Резюме

На сегодняшний день миграция армянского населения является одной из важнейших проблем республики. Специалисты в основном анализируют социально-экономические и демографические последствия миграции, иногда игнорируя её, этнокультурное влияние на развитие общества. На протяжении долгих лет живя и работая в иноэтничной среде, интенсивно общаясь с местным населением, мигранты испытывают на себе определенное воздействие данной культурной среды. С другой стороны, они экспортируют в новую среду свои национально-культурные ценности. Социологические исследования показывают, что первое и второе поколение мигрантов лишь частично интегрируется в эти общества, сохраняя и развивая свою национальную культуру, создавая новое транскультурное пространство, чему способствуют национально-культурные, образовательные, благотворительные организации, воскресные школы. Мигранты издают газеты, отмечают ряд национальных и церковных праздников, памятные даты. Формируя новые социальные связи, они в то же время остаются в прежних общественных социальных сетях; армянские этнические сети иногда формируются на основе земляческих, родственных, дружеских связей, они неоднородны и состоят из внутриэтнических групп.

MIGRATION AND CULTURAL TRANSFORMATION

M. GALSTYAN

Abstract

Nowadays the migration of the Armenian population is one of the most important problems of the country. Experts generally analyze the socio – economic and

demographic consequences of migration, sometimes ignoring its ethnic and cultural influence on the development of society. For many years living and working in other-ethnic environment, having intensive contacts with local people, migrants feel the specific impact of this cultural environment. On the other hand, they export national-cultural values to their new environment. Sociological studies show that the first and the second generation migrants are only partially integrated into those societies, preserving and developing their culture, creating a new transcultural space, aided by national cultural, educational, charitable organizations, Sunday schools. Migrants publish newspapers, celebrate a number of national and religious holidays, anniversaries. Forming new social ties, they at the same time remain in the former public social networks. Armenian ethnic networks are sometimes formed on the basis of compatriot, kinship ties of friendship, they are heterogeneous and consist of intra groups.